



ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 9 ՄԱՅԻՍ, 2016

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւնն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւնն զբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս ՚մ. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՄԱՐՄԻՆ ՏԷՐՈՒՆԱԿԱՆ ԵՒ ԱՐԻՒՆ ՓՐԿՁԱԿԱՆ

Մարմին Կրօնական, եւ արին փրկչական կայ առաջի,
երկնային գորութիւնքն յաներեւոյթս
երգեն եւ ասեն անհանգիստ բարբառով.
սուրբ, սուրբ, սուրբ, Տէր գորութեանց:

- Քրիստոս պարարագեալ բաշխի ի միջի մերում. ալելուիա:
- Ջմարմին իւր Կայ մեզ կերակուր եւ սուրբ զարին իւր ցօղէ ի մեզ. ալելուիա:
- Մարիք առ Տէր եւ առէք զոյս. ալելուիա:
- Ճաշակեցէք եւ փետք զի քաղցր է Տէր. ալելուիա:
- Օրհնեցէք զՏէր ի յերկինս. ալելուիա:
- Օրհնեցէք զնա ի բարձունս. ալելուիա:
- Օրհնեցէք զնա ամենայն հրեշտակք նորա. ալելուիա:
- Օրհնեցէք զնա ամենայն գորութիւնք նորա. ալելուիա:

ՇԱՐԱԿԱՆ - ԱՊՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխաՀիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցէրց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղէրց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

ԱՊՈԹՔ

*Պահապան ամենայնի Քրիստոս,
 աջ քո հոսանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
 ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,
 ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
 եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

ՕՐՈՒՄՆ ՆԻԺԹԸ



ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐՈՒՄ ՈՒՂՂՈՒՄԸ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԸ (ԳԼԽ 11:17-34)



ՏԷՐՈՒՆԻ ԸՆԹՐԻՔ (11:17-34)

Պօղոս Առաքեալ եթէ պահ մը գովեց զիրենք, որովհետեւ «**ինչ որ սորվեցուցի ձեզի կը յիշեք, եւ ինչպէս որ ձեզի աւանդեցի՝ այնպէս կը պահեք**» (2 հմր): Իսկ հիմա, ո՛չ: «**Ձեզ չեմ գովեր, որովհետեւ կը լսեմ թէ ձեր հաւաքոյթները աւելի վնաս կու փան ձեզի, քան օգուտ**» (17 հմր): Ահաւասիկ, մէկ այլ ուրիշ հարց մը կու գայ աւելնալու նախորդ հարցերուն վրայ, ինչ որ պարճառ եղած էին Կորնթոսի համայնքի խանգարումին, փոխանակ ներդաշնակ ու կարգապահ ըլլալու, որ ամենայապկանշական զիծը պէտք է ըլլար Եկեղեցոյ: Այդ խանգարումը հասած էր մինչեւ իսկ ամենակարեւոր արարողութեան, որ Տիրոջ Ընթրիքն էր: Ընդհակառակը, այս հաւաքոյթը այն գեղեցիկ առիթն էր ցոյց փայլու եւ արքայապետութեւն ներդաշնակութեան ու եղբայրութեան ոգին: Անոր համար ալ այդ հաւաքոյթը փոխանակ օգուտ ըլլալու, վնաս կը բերէր հաւաքացեալներուն: Ահա այդ իսկ պարճառով, Պօղոս Առաքեալ յանձն կ'առնէ գրել այդ մասին: Տեսէք, եթէ նախորդ հարցերը քննարկեց, անոնց փայլով որոշ առաքելական հեղինակութեամբ լուծումներ, ապա այս պարագային հարցը շար աւելի լուրջ է: Որովհետեւ այսպէս պարզ հաւաքոյթի մասին չէ, այլ Տերունի Ընթրիք, որուն մէջ կայ փրկագործութեան խորհուրդը:

Առաջին վնաս: «**Ամբողջ եկեղեցիով մէկպեղ կը հաւաքուիք՝ հակառակ խումբերու կը բաժնուիք**» (18 հմր): «**Անշուշտ որ պառակտումներ պիտի ըլլան, որպէսզի անով յայտնուին թէ որոնք են իսկական ընտրեալները**» (19 հմր): Նամակի սկիզբին արքայապարած երեւոյթին մէկ այլ փարբերակը. «**Մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի անունով կոչ կ'ուղղեմ ձեզի, որ բոլորդ միաբանիք, եւ պառակտումներ չըլլան ձեր մէջ**» (1:10): Չնայած, որ այս երեւոյթը նաեւ բնական է, որպէսզի անով յայտնուի ճշմարտութիւնը: Որովհետեւ մարդուն իսկական նկարագիրը կը յայտնուի փորձութեան մէջ, որպէսզի անով յայտնուի ով է իսկական ընտրեալը, այսինքն՝ ան որ ճշմարիտ, անկեղծ ու հաւատարիմ է իր հաւաքին ու սիրոյն մէջ: Սա կը նշանակէ, թէ փորձութիւնը ոչ թէ միայն մարդս ընտրի կը դարձնէ, այլ՝ ընտրի եղողը կը յայտնէ եւ աւելի կը հաստատէ իր եղածին մէջ: Առաքեալը այս ձեռով կ'արքայապարտուի ըսելու համար թէ դուք կը հաւաքուիք ընթրիք ընելու համար, բայց արհիկա Տերունի ընթրիք չեղաւ, այնքան արեւն որ ձեր մէջ պառակտումներ կան, փոխանակ սեր եւ եղբայրութիւն ըլլալու:

Երկրորդ վնաս: «**Տերունի ընթրիքին համար ձեր հաւաքոյթներու ընթացքին ձեզմէ իւրաքանչիւրը սկիզբէն ընթրիքի վրայ կ'իմայ, այնպէս որ ոմանք անօթի կը մնան, իսկ ուրիշներ կը զինովնան**» (20-21 հմր): Ահա ճիշդ ասոր համար ձեզ չեմ գովեր (22 հմր): Ընթրիքին ամբողջ նպատակն է միասին ուրել, իր բերածէն ուրիշին բաժին հանել: Բայց արդէն, հարուստները իրենց բերածը անմիջապէս կ'ուրեն, իսկ աղքատները, որոնք ոչինչ ունին, անօթի կը մնան, ու անօթի ալ կը վերադառնան փուն: Իսկ միսները կը զինովնան:

Անմիջապէս Պօղոս Առաքեալ կ'անցնի բացատրութեան, թէ այդ Տերունի ընթրիքը նոյնինքն Տիրոջ կողմէ աւանդուած է: Անով ցոյց փայլու, ոչ թէ աւանդումին եղանակը, այլ՝ աւանդուածին վաւերականութիւնը: Առաւել եւս, երբ կը շեշտէ թէ երբ աւանդուեցաւ. «**մատնութեան զիշերը**», այսինքն՝ ինչ պայմաններու փակ: Այնպիսի կացութիւն մը, որ Տիրոջ մահը ստոյգ է, եւ իբրեւ վերջին կրակ գայն կ'աւանդէ իրենիներուն:

Ահա գրաւոր առաջին յիշատակութիւնը Տիրոջ Ընթրիքին մասին:

«**Հացը առաւ գոհացաւ եւ բեկանեց**»: Այն հացը, որ կը գործածուէր զարկական ընթրիքի արեւն, այսինքն՝ արագարջ, անխմոր: Գոհացաւ: Աստուծոյ շնորհակալութիւն յայտնեց, որ կը նշանակէ Պարարագի խորհուրդը շնորհակալութիւն է Աստուծոյ:

«**Այս ըրէք իմ յիշատակիս համար**»: Պարզապէս յիշատակել մը չէ, այլ աւելին, ո՛վ եւ ի՞նչ եղած է մեզի համար, ի՞նչ ըսած եւ ի՞նչ ըրած է մեզի համար: Նոյնպէս եւ բաժակը, որ Քրիստոսի արինով նուիրագործուած իբրեւ նոր ուխտին նշանը: Ուխտ կը նշանակէ դաշինք, համաձայնութիւն:

Ահա Պօղոս Առաքեալ կ'ըսէ. «**ամէն անգամ որ այս հացը կ'ուրելք եւ բաժակէն կը խմէք, Տիրոջ մահը կը պատմէք, մինչեւ իր երկրորդ գալուստը**» (26 հմր): Այս արքայապարտութիւնը ցոյց կու փայլու, որ Եկեղեցին երկրի վրայ Տիրոջ փրկագործական խորհուրդը կը պատմէ, այսինքն՝ Անոր խաչելութիւնը, Անոր երկրորդ գալուստին անկնկալութեամբը լեցուած: Որովհետեւ Անոր գալուստով պիտի դադրի, եւ այս անգամ երկինքի մէջ Նոր զինին փայլու:

Ահա այս ի մրի ունենալով, Առաքեալը կը զգուշացնէ ըսելով. «**ով որ անարժանութեամբ ուրիշ այս հացը կամ խմեց Տիրոջ բաժակէն, Տիրոջ մարմնին եւ արեան դէմ մեղանշած կ'ըլլայ**» (27 հմր): Այսինքն՝ փարբերութիւն չի դներ կամ չի փեսներ սովորական հացին ու Տիրոջ մարմնին միջեւ: Որովհետեւ ալ արիկա սովորական հաց չէ, ոչ ալ պարզ նշաններ են: Հաց է իր փեսակին մէջ, բայց սովորական հաց չէ, այլ՝ նուիրագործուած Սուրբ Հոգիով Տիրոջ մարմնին է եւ արիւնը:

Մէկ այլ զգուշաւորութիւն մը կու փայ Առաքեալը ըսելով. «**Ուստի ամէն մարդ նախ ինքզինքը թող քննէ եւ ապա միայն այս հացէն ուրիշ եւ բաժակէն խմէ, որովհետեւ ով որ անարժանութեամբ կ'ուրիշ եւ կը խմէ՝ այդ ուրիշովն ու խմելովը ինքզինքը դատապարտութեան կ'ենթարկէ, քանի որ զանազանութիւն չի դներ սովորական հացին եւ Տիրոջ մարմնին միջեւ**» (28-29 հմր):

«Այս է պատճառը, որ ձեր մէջ բազմաթիւ հիւանդներ ու ցաւագաններ կան եւ բազմաթիւ են անոնք՝ որ նոյն պատճառով մեռան» (30 հմր): Պօղոս Առաքեալ մաքնանշելով երեւոյթները, ցոյց կու փայ, թէ ինչպէս անփարբերութեամբ մօտենալու պարագային Աստուծոյ անմիջական պատիժը անխուսափելի է: Այս պատճառական միջոցը, ոչ թէ միայն անձին, այլ նաեւ իբրեւ օրինակ միւսներուն, որպէսզի անոնք եւս զգուշութեամբ մօտենան խորհուրդին: Եթէ անցեալին զարկական անխմոր հաց ուրիշուն պատիժը մահ էր (Ելից 12: 15, 19), որքան առաւել ծանր Նոր Ուխտի զարկը անարժանութեամբ ճաշակելուն պատիժը: Ինչպէս որ նիւթական սնունդը վնասակար է հիւանդ սրամոքսին համար, նոյնպէս ալ Քրիստոսի Մարմնին ու Արիւնը որպէս հոգեւոր սնունդ վնասակար է ախտաւոր հոգիին համար: Նոյնպէս ալ հակառակը, եթէ արաժանատրութեամբ, գիտակցութեամբ ճաշակենք, այս անգամ կ'ըլլայ դեղ ու դարման, ոչ միայն հոգիի, այլ նաեւ՝ մարմնի:

«**Եթէ մենք զմեզ քննէինք, չէինք պատժուիր: Իսկ եթէ կը պատժուինք, Տէրը այդ ձեռով կը խրաբէ մեզ, որպէսզի չըլլայ որ աշխարհի հետ միասին դատապարտուինք**» (31-32 հմր): Եթէ Տէրը ժամանակաւորապէս կը պատժէ, որպէսզի անով զգաստութեան հրաւիրէ անհատը, վերջին դատապարտութեան չենթարկուելու համար:

Պօղոս Առաքեալ կ'եզրակացնէ ըսելով. «**Ուստի, եղբայրներս, երբ Տիրոջ ընթրիքէն ճաշակելու համար իրարու քով կը հաւաքուիք, նախ իրարու սպասեցէք: Իսկ ով որ անօթի է՝ թող իր փունը ուրիշ, որպէսզի ձեր հաւաքոյթը դատապարտութեան առիթ չըլլայ**» (33-34 հմր): ուրեմն ինչն էր պակասող փարբը, «իրարու սպասել»: Իսկ կշտանալու համար, ոչ Աստուծոյ փան մէջ, այլ՝ փունը, որպէսզի դատապարտութեան առիթ չըլլայ: Անցեալին, ոչ թէ միայն հացի բեկանում կ'ընէին, այլ նաեւ սիրոյ ճաշ փեղի կ'ունենար, որու աւարտին հացի բեկանում եւ բաժակի ըմպում: Բայց ժամանակի ընթացքին այս երկուքը իրարմէ զարուեցան: Հետեւեալ պատճառներով.-

1. Անկարգութիւն, իրար չսպասել, գինովնալ:
2. Հալածանքներ:
3. Ծոմապահութեան հարցը, որ նախ ճաշակելու Մարմնին ու Արիւնը, որմէ ետք՝ սիրոյ ճաշը:

Սիրոյ ճաշի նպատակն էր հաւաքացեալները քով քովի գալու եւ իւրաքանչիւրը իր ունեցածը բերելու եւ բաշխելու ուրիշներուն, այս պարագային՝ աղքատներուն, իսկ հարուստներն ալ անով բարեգործութիւն ընելու եւ եղբայրսիրութիւն ցոյց փայլու:

«**Գալով մնացեալ հարցերուն, երբ որ գամ՝ պէտք եղածը կը կարգադրեմ**» (34 հմր): Տակաւին հարցեր կան քննարկելիք: